ԱՎԱՐՏԱՃԱՌԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հոկտեմբերի 4-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի չորս շրջանավարտների ավարտական թեզերի պաշտպանություն:

Գերազանց գնահատվեց Տ. Մեսրոպ աբդ. Պարսամյանի ավարտական թեզը՝ «Առ և ի նախդիրների իմաստային առումները ըստ Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» մատյանի» թեմայով (ղեկ.՝ բ. գ. թ. Պ. Բեղիրյան):

Հաջողությամբ իրենց ավարտաճառերը պաշտպանեցին նաև Արթուր սրկ. Քարտաշյանը՝ «Գանձասարի Կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանի կյանքը, գործունեությունը և պատմագիտական ժառանգությունը» (ղեկ.՝ պ. գ. թ. Գ. Գրիգորյան), Արթուր սրկ. Պետրոսյանը՝ «Հայաստանի ազատագրության մի ծրագիր 18-րդ դարի 60-ական թվականներին. Հովսեփ Էմին և Հովնան վարդապետ» (ղեկ.՝ պ. գ. թ. Պ. Հովհաննիսյան), և Տեր ուրարակիր Ղահրամանյանը՝ «Ամուսնաընտանեկան իրավունքը միջնադարյան Հայաստանում ըստ կանոնական սովորութային և աշխարհական իրավունքի նորմերի» (ղեկ.՝ պ. գ. դ. Ռ. Վարդանյան):

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ